Հաստատված է
01.11.2024թ.-ի հրաման թիվ 62
«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ գործադիր տնօրեն
Ա. Դարբինյան

Gladzor universal credit organization

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ, հեռ.՝ 010 55 15 15, էլ.փոստ՝ info@gladzoruco.am, կայք՝ www.gladzoruco.am, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի փողոց թիվ 1բ թիվ 42

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 01.11.2024թ.

## ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

## ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Վարկի նպատակ | Հիմնական միջոցների ձեռքբերման, շրջանառու միջոցների համալրման, նոր բիզնեսի ստեղծման, զարգացման և այլ բիզնես նպատակների իրականացման համար տրամադրվող վարկ |
| Վարկառուի նկարագիր | ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| | ԱՄՆ դոլար |
| Վարկի գումար | 3,000,000-50,000,000 ՀՀ դրամ կամ վերջինիս համարժեք ԱՄՆ դոլար՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց |
| Վարկի ժամկետ | 12-60 ամիս |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք | ՀՀ դրամի դեպքում՝ 13%-20% |
| | ԱՄՆ դոլարի դեպքում՝ 12%-18% |
| Տարեկան տկոսադրույք վարկային գծի չօգտագործված մնացորդի դիմաց | 1-3% |
| Սահմանաչափի նվազում | Վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցի համաձայն |
| Վարկային հայտի ուսումնասիրության վճար | Միանվագ 40,000 ՀՀ դրամ |
| Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար | Վարկի պայմանագրային գումարի 3%-ի չափով, որը ենթակա չի վճարման |
| Տոկոսագումարների հաշվարկման կարգը | Տարեկան անվանական տոկոսադրույքով՝ օգտագործված և չօգտագործված մնացորդների դիմաց |
| Վարկի տրամադրման եղանակ | Միանվագ կամ փուլային, անկանխիկ եղանակով |
| Վարկի մարման եղանակ | Հիմնական գումարի և տոկոսագումարների ամսական հավասարաչափ վճարումներ (անուիտետ)* |
| Վարկառուի այլ ծախսեր | Գրավի գնահատման, վերագնահատման, Նոտարական, պետական գրացման և ձևակերպման, ապահովագրական և դրանց հետ կապված ծախսեր** |
| Վարկի ապահովվածություն | Անշարժ կամ շարժական գույքի գրավ, երաշխիք երաշխավորություն, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ |
| Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն | Գրավի շուկայական արժեքի 70% |
| Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում | Կազմակերպության կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո որոշման կայացումը տևում է առավելագույնը 3 աշխատանքային օր, հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում |
| Վարկի տրամադրման ժամկետ | Վարկը տրամադրվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան պետական մարմիններից գրավի գրանցման իրավունքի վկայականը ստանալուն պես |
| Հաստատված վարկային հայտի վավերականության ժամկետ | Առավելագույնը 15 աշխատանքային օր՝ կախված առաջարկվող գրավի տեսակից |
| Վարկի ձևակերպման վայր | «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ, հասցե՝ ք. Երևան, Չարենցի փողոց թիվ 1բ թիվ 42 |
| Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ | Անվանական տոկոսադրույքի հաշվարկումը չի դադարում և, միաժամանակ, ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ գանձվում է տույժ՝ օրական **0.06%** |
| Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ | Ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ գանձվում է տույժ՝ օրական **0.07%** |
| Վարկ տրամադրելու դրական որոշման գործոններ | Արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր |
| | Դրական կամ չեզոք վարկային պատմություն |
| | Կայուն եկամտի աղբյուր |
| | Գրավի առարկայի համապատասխանություն կազմակերպության կողմից ընդունելի չափանիշներին |
| Վարկային հայտը մերժելու գործոններ | Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
| | ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը (առկայության դեպքում նաև համավարկառուները, երաշխավորները, ինչպես նաև համատեղ բնակվող ընտանիքի անդամները) ունի բացասական վարկային պատմություն: Վարկային պատմությունը համարվում է բացասական, եթե հաճախորդը ունեցել է կամ ունի վարկային պարտավորություններ որոնք սպասարկվել են ուշացումներով կամ դասակարգվել են համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հաստատած «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի |
| | Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ |
| | Գրավ առաջարկվող գույքի գնահատման արդյունքում պարզվել է, որ այն որպես գրավ ընդունելի չէ կազմակերպության համար |
| | Հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրում |
| | Վարկային հայտը հաստատվել է, սակայն հաճախորդը հաստատմանը հաջորդող 15 օրերի ընթացքում չի ներկայացել կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը |
| | Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի են դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ են դնում հաճախորդի վճարունակությունը |
| Վարկի վճարման եղանակներ | **Կանխիկ եղանակով՝**<br>անմիջապես վարկային կազմակերպության դրամարկղում (հասցե՝ ք. Երևան, Չարենցի փողոց թիվ 1բ թիվ 42), |
| | **Անկանխիկ եղանակով՝**<br>1. **«Արդշինբանկ» ՓԲԸ հաշիվներ** - ՀՀ դրամ 2474602514470000, ԱՄՆ դոլար 2474602514470010,<br>2. **«ԱյԴի բանկ» ՓԲԸ հաշիվներ** – ՀՀ դրամ 11817068806300, ԱՄՆ դոլար 11817068806301,<br>3. **«Արցախբանկ» ՓԲԸ հաշիվներ** – ՀՀ դրամ 22325000913900, ԱՄՆ դոլար 22325000913902<br>4. **«Ամիօբանկ» ՓԲԸ հաշիվներ** – ՀՀ դրամ 11500583623036, ԱՄՆ դոլար 11500993230832<br>5. **Telcell** տերմինալների և **Telcell Wallet** էլ. դրամապանակի միջոցով՝ ընտրելով վարկային կազմակերպությունների ցանկից «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ն և մուտքագրելով Ձեր վարկային պայմանագրի առաջին էջում նշված վարկային կոդը: |

| | |
|---|---|
| Լրացուցիչ ծառայություններ | Վարկային պայմանագրի երկարաձգման համար վճարվում է սակագին՝ 30,000 ՀՀ դրամ գումարի չափով |
| | Վարկի մարման ժամանակացույցի փոփոխության համար վճարվում է սակագին՝ 10,000 ՀՀ դրամ գումարի չափով |
| | Գրավի առարկա հանդիսացող գույքի սեփականատիրոջ անվանափոխության, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու նպատակով վարկային կազմակերպության կողմից տրվող տեղեկանքի (համաձայնության) համար, ինչպես նաև գրավի առարկայի հետ կապված այլ գործարքների դեպքում վճարվում է սակագին՝ 20,000 ՀՀ դրամ |
| | Այլ ծառայությունների դեպքում (հասցեի փոփոխություն, նոր անձի հաշվառում և այլ) վճարվում է սակագին՝ 10,000 ՀՀ դրամ |

**Քաղվածքների տրամադրման պայմաններ**

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ յուրաքանչյուր ամսվա 16-ին անվճար էլեկտրոնային կապի միջոցով (e-mail) սպառողներին է ներկայացնում կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի ու մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն՝ ՀՀ ԿԲ Կանոնակարգ 8/05-ի պայմաններին համապատասխան: Քաղվածքները և նրանց կրկնօրինակները սպառողների պահանջով տրամադրվում են անվճար:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՐԱ:

ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՉԻ ՆԵՐԱՌՎՈՒՄ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵՋ, ՀԵՏԵՎԱԲԱՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ՝ ԿԱԽՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԷՋՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ «ԳԼԱՁՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ ԿԱՅՔԻ «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ» ԲԱԺՆԻ «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ:

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է www.fininfo.am:

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏՔԸ ՉԾԱԾԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄՆԱՑԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՇՎԻՆ:

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ (ՄԻՆՉԵՎ 15ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ) ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԵԹԵ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԺԱՄԿԵՏ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ (ՄՏԱԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ): ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԿՐԵԴԻՏԻ ԳՈՒՄԱՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՈՂԻՆ ՎՃԱՐԵԼ ՏՈԿՈՍՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ: ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է ՍՊԱՌՈՂԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՍՊԱՌՈՂԻՆ (ՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ):

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՎԵՐԱՑՎՈՒՄ Է ՆՈՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ:

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾԸ ՑԱՆԿԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՎԵԼ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ ՉԵՆ ԳԱՆՁՎՈՒՄ:

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԳԵՐՓՈՔՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ 5 ՄԼՆ. ՀՀ ԴՐԱՄ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ, ՎԱՐԿԱՏՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԳԵՐՓՈՔՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ 5 ՄԼՆ. ՀՀ ԴՐԱՄ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԿՈՒՂԱՐԿՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵԻՆ

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ, ՈՐ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ՉԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊԱ ԵՐԱՇԽԱՎՈՐՆ Է ՎՃԱՐԵԼՈՒ ԻՐ ՓՈԽԱՐԵՆ, ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԵԼՈՒ Է ԻՐ ԳՈՒՅՔԻՑ, ՏՐԱՄԱԴՐԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԳՐԵՐԻ և ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿԻ ՕՐԻՆԱԿ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ, 7 ՕՐ ԱՌԱՋ ԾԱՆՈՒՑԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԱՌՆՎԱԶՆ 1 ՕՐ ԱՌԱՋ ՀԻՇԵՑՆԵԼ ԱՌԿԱ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՈՒՇԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՄԵՆԱՈՒՇԸ ՄԵԿ ՕՐ ՀԵՏՈ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ ԱՅԴ ՄԱՍԻՆ:

ՍՊԱՌՈՂՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ (ՄԻՆՉԵՎ 10 ՄԻԼԻՈՆ ՀՀ ԴՐԱՄ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ) ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԲՈՂՈՔ-ՊԱՀԱՆՋՆԵՐԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ, ՈՐԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՆ Է www.fsm.am: ԸՆԴ ՈՐՈՒՄ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՔԵԼ Է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ:

*Անուիտետային վարկի մարման եղանակի դեպքում յուրաքանչյուր ամիս հաշվարկվում է հավասար չափի գումար, որը կազմված է վարկի մայր գումարից և տոկոսագումարներից, սակայն, սկզբնական շրջանում այդ նույն չափի գումարի մեջ ավելի մեծ է տոկոսագումարների մեծությունը, փոքր է մարվող մայր գումարը: Ժամանակի ընթացքում այս բաշխումը փոքրանում է, այսինքն՝ մայր գումարի մեծությունը ամսական մարման մեջ մեծանում է, իսկ տոկոսագումարների մեծությունը փոքրանում է, սակայն ամսական վճարումները մնում են անփոփոխ:

**Գրավի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը կատարվում են վարկառուի (գրավատուի) կողմից: Ընկերությունը կարող է պահանջել նաև ապահովագրել գրավի առարկա հանդիսացող գույքը, որի հետ կապված ծախսերը իրականացվում է վարկառուի (գրավատուի) կողմից: Գրավի գնահատման, նոտարական վավերացման, պետական գրանցման, ապահովագրման ծախսերի գնային միջակայք՝

| Ծառայության անվանումը | Մատուցվող ծառայության գնային միջակայք |
|---|---|
| 1. Անշարժ գույքի գնահատում | նվազագույնը 15,000 ՀՀ դրամ |
| 2. Անշարժ գույքի մասնակակն տեղեկանք | սկսած 10,000 ՀՀ դրամից |
| 3. Անշարժ գույքի գրավի պայմանագրի նոտարական վավերացում | 15,000-40,000 ՀՀ դրամ |
| 4. Հիփոթեքի (անշարժ գույքի) գրավի պետական գրանցում | մինչև 45,000 ՀՀ դրամ |
| 5. Նոտարական փաթեթներում առկա հայտարարություն/համաձայնություն | ամուսնացած լինելու դեպքում՝ կնոջ/ամուսնու համաձայնություն՝ 8,000 ՀՀ դրամ<br>ամուսնացած չլինելու դեպքում՝ ամուսնացած չլինելու վերաբերյալ հայտարարություն՝ 1,500 ՀՀ դրամ |
| 6. Շարժական գույքի գնահատում | 3,000-10,000 ՀՀ դրամ |
| 7. Շարժական գույքի գրավի պայմանագրի նոտարական վավերացում | առավելագույնը 15,000 ՀՀ դրամ |
| 8. Շարժական գույքի ապահովագրություն | գույքի շուկայական արժեքի 2.5% |
| 9. Շարժական գույքի պետական գրանցում | մինչև 5,000 ՀՀ դրամ |

*«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ հետ համագործակցող ընկերություններ*

| Ապահովագրական ընկերություններ | Անշարժ և շարժական գույքի գնահատման գործակալություններ |
|---|---|
| **«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50<br>հեռ. +374 (10) 59-21-21 | **«Օլիվեր Գրուպ» ՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Թումանյան 8<br>հեռ. (010) 54-07-40, (091) 54-27-50, (094) 54-27-60<br>էլ. փոստ info@olivergroup.am |
| **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110, «Պիացցա Գրանդե» Բիզնես Կենտրոն<br>հեռ. +374 (10) 53-64-94 | **«Ափթայմ» ՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Նաիրի Զարյան 73/1 շենք, <<Մակկոնի>> բիզնես կենտրոն 1-ին հարկ<br>հեռ. (060) 53-53-71, (098) 53-53-14<br>էլ. փոստ info@uptimeiic.org |
| **«Ռեգո Ինշուրանս» ԱՓԲԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/1<br>հեռ. +374 (60) 27-57-57 | **«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Կենտրոն համայնք, Հանրապետության փողոց, 67 շենք, Republic բիզնես կենտրոն 2-րդ հարկ<br>հեռ. (010) 54-48-82<br>էլ. փոստ info@cost.am |
| | **«Արմէքս» ՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Նար-Դոսի փող., 69-3<br>հեռ. (091) 40-23-40, (098) 40-23-40<br>էլ. փոստ armexarmenia@mail.ru |
| | **«Գարդի» ՍՊԸ**<br>հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 7 թիվ 4<br>հեռ. (091) 22-01-63<br>էլ. փոստ gardiltd@gmail.com |

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը «Գլաձորբանկ» ՓԲԸ ընկերությունից ՀՀ ԿԲ-ի խորհրդի 01.07.2003թ. թիվ 224Ա որոշմամբ վերագրանցվել է «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի, որը հանդիսանում է «Գլաձորբանկ» ՓԲԸ ընկերության իրավահաջորդը (լիցենզիա թիվ 5, գրանցման վկայական՝ թիվ 5): Ընկերությունը տրամադրում է վարկեր և ֆինանսական խորհրդատվություն ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց: Ընկերությունը հաճախորդներին առաջարկում է կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր ՀՀ դրամով և արտարժույթով՝

- հիփոթեքային վարկեր՝ անշարժ գույքի ձեռք բերման, վերանորոգման և կառուցապատման նպատակով
- բիզնես վարկեր
- սպառողական վարկեր

**«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:**

**Մանրամասներին կարող եք ծանոթանալ www.gladzoruco.am կայքում, ուղարկել էլ. նամակ info@gladzoruco.am հասցեին կամ զանգահարել 010 55 15 15 հեռախոսահամարով:**

***Տեղեկատվական ամփոփագրերից տարբերվող պայմաններով վարկերը տրամադրվում են ընկերության խորհրդի որոշմամբ***